ժիմը։ Եւ երիտասարդ-Թիւրքերի յաղթանակը զգալի չափով արդիւնք էր նաև հայերի օժանդակութեան։

Երբ Իտալիան յարձակուեց Տրիպոլիի վրա, Թրքահայ ժողովուրդը, հակառակ Ատանայի արիւնոտ յիշատակների, նորից կառավարութեան կողքին էր՝ անվարան նպաստելով երկրի պաշտպանութեան գործին։ Պետութեան սպառնացող վտանգը հայութիւնն ընդունում էր վտանգ և իրեն համար։

Եւ, սակայն, Թիւրքերը ոչ միայն չգնահատեցին հայ ժողովրդի այս անկեղծ զգացմունքները, ո՛չ միայն չաշխատեցին նրա մէջ խորացնելու և ամրացնելու օսմանեան պետականութեան գաղափարը, այլ, կարծես դիտաւորեալ կերպով, թափեցին ամէն ճիգ ու ջանք՝ սառցնելու համար հայերի նման վերաբերումը, յետ մղելու նրանց իրենցից ու Թիւրքիայից։ Երբ սկսուեց Թիւրք-բալկանեան պատերազմը, հայերի մէջ այլևս հաւատ ու խանդավառութիւն չէր մնացել։ Պատրիարքարան, կուսակցութիւններ, հանրային կարծիքը, բովանդա՛կ ժողովուրդը եկել էին այն համոզման, որ առանց դրսի միջամտութեան հայերի վիճակը չի բարեփոխուի։ Այս տրամադրութեան հետևանքով էր, որ, օրինակ, պատերազմի ընթացքին բուլգարահայութիւնը կազմակերպեց Թիւրքիայի դէմ Անդրանիկի կամաւորական խումբը։

Նոյն տրամադրութեան հետեւանքով ծնունդ առաւ նաև կաթուղիկոսական պատուիրակութիւնը Եւրոպայում՝ Պօղոս Նուպարի գլխաւորութեամբ։ Հայերը նորից բռնեցին քաղաքական այն ուղին, որով ընթացել էին Բերլինի վեհաժողովից ի վեր — փչոտ, վտանգաւոր, թէ՛ հայերի և թէ՛ Թիւրքերի համար հաւասարապէս փորձութիւններով հարուստ ուղի։ Սակայն, ուրիշ հեռանկար չէր տեսնում. «վերածնուող» Թիւրքիան էլ, ինչպէս առաջները սուլթանական Թիւրքիան, հայերին մղում էր դէպի ա՛յդ ուղին։

Եւ այս անգամ, կարծես, յաջողութիւնը ժպտում էր հայերին. մեծ պետութիւնների կամ, աւելի ճիշտ, ռուս-գերմանական երկար ու տաղտկալի վէճերից ու սակարկութիւններից յետոյ, որոնց ընթացքին Գերմանիան ոգի ի բուն պաշտպանում էր Թիւրքերին, իսկ Ռուսաստանը պնդում էր հայկական բարենորոգումների վրա, վերջ ի վերջոյ, 1914թ. յունուար 26-ին, մեծ-վեզիր Սայիտ-Հալիմի և Ռուսաստանի Պոլսի դրծակատար Գուլկեւիչի միջև ստորագրուեց բարենորոգումների ծրագիրը։ Գերմանիան հրաժարուեց դնել իր ստորագրութիւնը այդ թղթի տակ։

Համաձայն այդ ծրագրի հայկական վեց վիլայէթներին պիտի կցէր Տրապիզոնի նահանգն եւս և այդ ամբողջ շրջանը պիտի բաժանուէր երկու ընդհանուր քննչութիւնների, կամ, ինչպէս սիրում էին ասել հայերը, մարզպանութիւնների։ Առաջին շրջանը պիտի բաղկանար Էրզրումի, Տրապիզոնի և Սեվազի վիլայէթներից, երկրորդը՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Տիգրանակերտի։ Ընդհանուր քննիչները պէտք է լինէին եւրոպացիներ։ Նրանց նշանակումը կատարելու էր Բ. Դուռը՝ համաձայն մեծ պետութեանց առաջարկելիք թեկնածուների։